Հավելված N 3
ՀՀ կառավարության 2026 թվականի
հունվարի 22-ի N 97-Ն որոշման

ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

1. Քաղաքացիության հարցերով միջգերատեսչական հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) խորհրդակցական մարմին է:

2. Հանձնաժողովը սույն կարգով սահմանված կարգով եզրակացություն է տրամադրում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու կամ դադարեցնելու վերաբերյալ:

3. Հանձնաժողովը կազմված է հանձնաժողովի ղեկավարից և անդամներից: Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության, Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության և Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության ներկայացուցիչներ:

4. Հանձնաժողովի կազմը հաստատում է Հայաստանի Հանրապետության վարչապետը:

5. Հանձնաժողովի կազմում ընդգրկված անձինք հանձնաժողովի աշխատանքներին մասնակցում են հասարակական հիմունքներով:

6. Հանձնաժողովը եզրակացություն է տրամադրում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու կամ դադարեցնելու վերաբերյալ դիմումների կապակցությամբ, ինչպես նաև «Քաղաքացիության մասին» օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ:

7. Հանձնաժողովի գործառույթների իրականացումն ապահովվում է Համակարգում էլեկտրոնային ընթացակարգի միջոցով:

8. Հանձնաժողովի նիստն իրականացվում է Համակարգում անդամների քվեարկության միջոցով: Ծառայության աշխատակցի կողմից Համակարգ վերբեռնված բացասական եզրակացությունները, ինչպես նաև «Քաղաքացիության մասին» օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ եզրակացությունն ինքնաշխատ ուղարկվում են հանձնաժողովի անդամներին, որոնց հասանելի է նաև անձի՝ քաղաքացիություն ստանալու կամ քաղաքացիությունը դադարեցնելու ամբողջական գործը: Հանձնաժողովի անդամները քվեարկում են ոչ ուշ, քան 10 աշխատանքային օրվա ընթացքում:

9. Հանձնաժողովը կարող է որոշում ընդունել, եթե քվեարկությանը մասնակցել է հանձնաժողովի անդամների կեսից ավելին: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են քվեարկությանը մասնակցող հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Հավասար ձայների դեպքում վճռորոշ է հանձնաժողովի ղեկավարի ձայնը:

10. Քվեարկության արդյունքով Համակարգում ինքնաշխատ գեներացվում է հանձնաժողովի եզրակացություն, որը հասանելի է Ծառայությանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

23.01.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ